

ՏՈՆԱՑՈՒՅՑ

1. Հունվարի 30, ուրբաթ օրը Սուրբ Սարգսի պահք, հունվարի 31-ին Տոն Սուրբ Սարգսի:
2. Փետրվարի 2 Տյարնընդառաջ: Սուրբ Պատարագ՝ ժամը 13:00
3. Փետրվարի 12 Վարդանանց տոն:
4. Փետրվարի 15՝ Բուն Բարեկենդան, Սուրբ Պատարագ, որի ավարտին տեղի կունենա Մոխրոց ժամը 15:30:
5. Փետրվարի 16-ից Ապրիլի 4՝ Մեծ Պահքի ժամանակաշրջան:
6. Մարտի 25՝ Սուրբ Կույս Մարիամի Ավետման տոն:
7. Մարտի 29՝ Ծաղկազարդ, Ուռօրհներ և Դոնբացք:
8. Ապրիլի 5՝ Սուրբ ԶԱՏԻԿ, Պատարագ՝ ժամը 15:30:
9. Ապրիլի 6՝ Օր մեռելոց: Պատարագ ժամը 13:00

Խմբագրումը և ձևավորումը՝ Վարդուհի Ասատրյանի
Մեր հասցեն՝ ր. Москва, ул. Малая Грузинская д. 19/2
Հեռախոսներ՝
+7 (965) 258 68 41(Վ. Ասատրյան)
+ 7(926) 904 91 49 (Հայր Պետրոս Ծայրագույն Վարդապետ Պետրոսյան)
E-mail - am.armcatholik@mail.ru, anusharts@mail.ru, ppetros@libero.it
<http://armcatholik.ru>



ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ
ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ՑԱՎԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՅՄԻ

Մոսկվայի հայ կաթողիկե համայնքը խորապես ցավում է հունվարի 12-ին Հայաստանի Գյումրի քաղաքում տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ: Անմարդկային դաժանության և անաստվածության զոհ գնաց հայի ընտանիքը: Սգում ենք անմեղ զոհերի հարազատների հետ և աղոթում զոհերի հոգիների համար:

Ապաքինում և առողջություն ենք մաղթում հիվանդանոցում կյանքի իր իրավունքի համար մաքառող փոքրիկ Սերյոժա Ավետիսյանին, որը դեռ կծխեցնի Ավետիսյանների օջախի ծուխը: Ոգու արիություն, համբերություն և ուժ ենք մաղթում հարազատներին ու բարեկամներին: Աղոթում ենք և Աստծո բարեհաճությունը հայցում Արդարադատության հաստատման գործում:

Մոսկվայի Հայ Կաթողիկե համայնք
Մոսկվա 18 հունվարի 2015թ.



ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1Տիմոթեոս 1, 1-11

1 Պօղոսը՝ առաքելալը Յիսուս Քրիստոսի, ըստ հրամանի մեր Փրկիչ Աստծու եւ Յիսուս Քրիստոսի, որ մեր յոյսն է. ²Տիմոթեսին՝ հաւատի մէջ սիրելի որդուն շնորհ, ողորմութի՛ւն, խաղաղութի՛ւն Հայր Աստծուց եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսից: ³Ինչպէս խնդրեցի քեզ, երբ գնում էի Մակեդոնիա, մնա՛ Եփեսոսում, որպէսզի պատուէր տաս, որ ոմանք օտար ուսմունք չուսուցանեն ⁴եւ չկապուեն առասպելներին ու անվերջանալի տոհմաբանութիւններին, որոնք մանաւանդ պատճառ կը լինեն վեճերի, բայց չեն ծառայում Աստծու ծրագրերին, որոնք հաւատի վրայ են հիմնուած. ⁵քանզի պատուիրանի գլխաւորը սերն է՝ բխած սուրբ սրտից, բարի խղճմտանքից եւ անկեղծ հաւատից, ⁶որոնցից վրիպեցին ոմանք՝ խոտորուելով խօսքերի ունայնութեան մէջ: ⁷Ուզում են օրէնքի վարդապետներ լինել. իրենք իսկ չեն իմանում՝ ինչ են խօսում, ոչ էլ հասկանում այն բաները, որոնց վրայ պնդում են: ⁸Գիտենք, որ օրէնքը լաւ է, եթէ մէկն այն գործադրի օրինաւոր կերպով: ⁹Բայց այս բանը թող իմանայ, որ արդարների համար չէ օրէնքը, այլ՝ անօրէնների եւ անհնազանդների, ամբարիշտների եւ մեղաւորների, անմաքուրների եւ պիղծերի, հայր ու մայր անարգողների, մարդասպանների, ¹⁰պռոնիկների, արուամուլների, մարդագողերի, ստախօսների, սուտ երդուողների, այլեւ ամէն բանի համար, որը





հակառակ է ողջամիտ վարդապետության, ¹¹վարդապետություն, որ համապատասխանում է երանելի Աստծու փառաւոր Աւետարանին, որին եւ հաւատարիմ եղայ ես:

Հովհաննէսի Ավետարանը 2, 1-11

³⁵Հետեւեալ 2 Գալիլիա հասնելու երրորդ օրը Կանա քաղաքում հարսանիք կար: Եւ Յիսուսի մայրը այնտեղ էր: ²Հարսանիքի հրաւիրուեցին նաեւ Յիսուս եւ իր աշակերտները: ³Եւ երբ գինին պակասեց, մայրը Յիսուսին ասաց. «Գինի չունեն»: ⁴Եւ Յիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել»: ⁵Նրա մայրը սպասաւորներին ասաց. «Ինչ որ ձեզ ասի, արե՛ք»: ⁶Այնտեղ կային քարե վեց թակոյկներ՝ հրեաների սովորութեան համաձայն մաքրուելու համար. նրանցից իւրաքանչիւրը շուրջ հարիւր լիտր տարողութիւն ուներ: ⁷Յիսուս նրանց ասաց. «Լցրե՛ք այդ թակոյկները ջրով»: Եւ լցրին բերնէբերան: ⁸Եւ ասաց նրանց. «Հիմա վերցրե՛ք եւ տարե՛ք սեղանապետին»: Եւ նրանք տարան: ⁹Եւ երբ սեղանապետը ճաշակեց գինի դարձած ջուրը ու չէր իմանում, թէ որտեղից է (բայց սպասաւորները, որոնք ջուր լցրին, գիտէին), ¹⁰իսուեց փեսայի հետ ու ասաց. «Ամեն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, եւ երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը: Իսկ դու ընտիր գինին մինչեւ հիմա պահել ես»: ¹¹Յիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում որպէս սկիզբը նշանների եւ յայտնեց իր փառքը, ու նրա աշակերտները հաւատացին նրան:

Մանկական էջ.

Լրացրո՛ւ սկանվորդը

					«Միայն, գիտեմ ոչ որդիանց ... ճանկել էր մի գառան մորթի»
					
					
					
		Առապելական հերոս Տորթ ...			

2 ՄԱՇԻՆԿԱ N 13

Հայոց Մեծ Ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ...

Հիշեցնենք, որ 2011 թ. ամռանը Պազանոն հայտնել էր, որ փաստաթղթերը կներկայացվեն Հռոմում կազմակերպվող Վատիկանի Lux in Arcane արխիվային փաստաթղթերի ցուցահանդեսին 2012թ. փետրվարին: Արխիվարիուսը հայտնել էր, որ 1896 թ. Հռոմի Պապ Լևոն XIII -ը հորդորել էր սուլթան Աբդուլ Համիդին կարեկցություն ցուցաբերել և դադարեցնել հայերի ցեղասպանությունը: Պազանոն նշել է, որ Հայոց ցեղասպանության մասին մոտ 100 փաստաթուղթ, այդ թվում Վատիկանի գաղտնի արխիվներից գրավոր տեղեկություններ թուրք զինվորների գործողությունների վերաբերյալ, կհրատարակվի առանձին գրքով: Նա ներկայացրել է հատվածներ այդ գրքից. թուրք զինվոր Մուստաֆա Սուլեյմանի վկայությունը."Մենք մտնում էինք հայկական գյուղեր և սպանում բոլորին, առանց հաշվի առնելու սեռն ու տարիքը: Մեզնից հետո գյուղ մտած քրդերը թալանում էին հայերի տները: Բազմաթիվ տարեց հայեր, հաշմանդամներ թաքնվել էին քաղաքի կենտրոնի դպրոցում, բայց մենք հրաման ունեինք սպանել բոլորին: Գեղիեզուզան ավանում սպանվեցին կամ այրվեցին 800 հայեր, Հայր Հովհաննեսի աչքերը հանեցին, մորուքը, քիթը և ականջները կտրեցին: Ես չեմ սպանել ոչ մի երեխա, նույնիսկ երկուսին փրկել եմ : Նրանց երեք օր թաքցրել էի իմ վրանում, բայց մի օր մտա ու տեսա, որ նրանց մարմինները մասնատված են..."

Եպիսկոպոս Պազանոն նաև հայտնել է, որ Վատիկանը կհրապարակի նաև առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երիտթուրքերի կառավարման ընթացքում, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությանը վերաբերող արխիվները: "Այդ փաստաթղթերը առաջացնում են անասելի ցավ ու սարսափ: Հաղորդումները թուրքերի դաժանությունների մասին հայերի նկատմամբ ինձ ստիպեցին ամաչել, որ ես մարդ եմ", - ասել է եպիսկոպոսը:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ՔԱՐՈՉԸ

“Մայրն ասաց. Նա ինչ որ ասի ձեզ արե՛ք” (Հովհ. 2:5):

Գալիլիայի Կանա քաղաքում մի հարսանիք կար, հրաշքը տեղի է ունենում հարսանիքի ընթացքում:

Հիսուս առաջին հրաշքը կատարում է պարզ մի ընտանիքում՝ փորձելով շեշտել Աստծու գործությունը և ընտանիքի սրբությունը:

Աստված առաջին հրաշքը կատարում է, երբ ստեղծում է մարդուն և նրա համար ստեղծում է ամեն ինչ: Մարդկային անձը, շնորհիվ իր ծագումին, մի ամբողջություն է: Մի միություն, միանգամայն մարմնավոր և հոգեվոր:

Մարդու Մարմինը մասնակցում է Աստուծո պատկերի արժանապատվության. Այն մարդկային մարմինն է ճիշտ նրա համար, որ շնչավորված է աննյութական հոգիով, իսկ ամբողջ մարդկային անձը սահմանված է՝ լինելու Հոգու Տաճարը Քրիստոսի Մարմնի մեջ: **«Չգիտե՛ք, որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգու» (1Կոր 6, 19-20)**, որը դուք Աստծուց եք առել, ուստի այնպես ապրեցեք, որ Աստված փառավորվի ձեր մարմիններով:

Գինին մարդկային կյանքում ուրախության խորհրդանիշն է: Հիսուս աշխարհ եկավ մարդկանց հաճույք և երջանկություն բերելու, դրա համար պակասած գինու փոխարեն նոր և ընտիր գինի տվեց հարսանքավորներին, որպեսզի նրանց ուրախությունը չընդհատվեր: **«Տիրոջ Հոգին Իմ վրա է, դրա համար իսկ օժեց Ինձ, Ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բժշկելու, զերիներին ազատում քարոզելու և կույրերին՝ տեսողություն, կեղեքվածներին ազատ արձակելու, Տիրոջը ընդունելի տարին հռչակելու» (Ղուկ. 4.16-19):**

Հարսանիքի առաջին բույեներին հյուրասիրված գինին, որն ըստ սեղանապետի «հասարակ» էր, կարծես խորհրդանիշն է աշխարհիկ, ժամանակավոր և երբեմն հրապուրիչ այն երևույթների,

որոնցով մարդիկ ուզում են իրենց ժամանակը անցկացնել, իսկ «ընտիր» գինին՝ հյուրասիրված Հիսուսի կողմից, աստվածային ճշմարտությամբ արմատավորված կյանքն է, որը վեր է ամեն տեսակի խաբուսիկ երևույթներից ու վայելքներից:

Միայն Քրիստոսով ու Իր հյուրասիրած շնորհք-գինով է, որ մարդն ունենում է իսկական կյանքի վայելք և աստվածային ճշմարտության կատարյալ գիտություն:

Տերը մեզ սովորեցնում է նախ և առաջ Աստծու Արքայությունը փնտրել և չշեղվել այդ փնտրտուքից ուրիշ հոգսերով, հոգ չանել աշխարհի կորստական գանձեր ձեռք բերելու մասին, որոնք հեշտությամբ փչանում և ոչնչանում են. **«...քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ և ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 6: 19-21):**

Աստված ստեղծեց մարդուն իր պատկերի և նմանությամբ, **«այր և կին ստեղծեց նրանց» (Օնդ. 1,27):** «այր» կամ «կին» լինելը գալիս է Աստծուց, այն մի անկրկնելի արժանավորություն է, ստեղծված միատեղ, մեկը մյուսի համար. **«Լավ չէ, որ մարդը լինի առանձին» (Օնդ. 2,18):** Մարդը հայտնագործում է կնոջը իբրև իր միուս «ես» -ը, նույն մարդկությամբ ստեղծված իրար հաղորդակցության և օգնության համար **«Սա ոսկորն է իմ ոսկրից և մարմինը իմ մարմնից» (Օնդ. 2,23):** Իրար հավասար են իբրև անձ և միաժամանակ՝ իրար լրացնող են՝ իբրև արու և էգ: Ամուսնության մեջ Աստված նրանց միացնում է այնպիսի ձևով, որ կազմեն **«միայն մեկ մարմին, արդ ինչ որ Աստված միացրեց մարդը թող չբաժանի» (Օնդ 2,24):**

Այրը և կինը միահատուկ ձևով պետք է գործակցեն Արարչի գործին՝ մարդկային կյանքը իրենց սերունդներին փոխանցելով: Աստծո ծրագրի մեջ այրը և կինը կոչում ունեն երկրին **«տիրելու» (Օնդ 1,28)**՝ իբրև տնտեսներ Աստծո: Այս գերիշխանությունը մի մեծ պատասխանատվություն է աշխարհի հանդեպ, որ Աստված մեզ է

վստահել. Այրը և կինը կանչված են մասնակցելու աստվածային նախախնամությանը:

Խնդրենք Աստծուն, որպեսզի Նա օգնի մեզ հավատով ապրենք և պահենք մեր ընտանիքների սրբությունները:

Ռուսաստանի հայ կաթողիկե եկեղեցու ընդհանուր տեղապահ, Մոսկվայի հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ Ծ.Վրդ. Հայր Պետրոս Պետրոսյան Մոսկվա , 18 հունվարի 2015թ.



Հայոց Մեծ Ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ...

Վատիկանը սկսել է հրապարակել հնագույն արխիվներում պահված գաղտնի փաստաթղթերը: Դրանք հիմնականում 400 տարվա վաղեմություն ունեցող դեպքերի վերաբերյալ են՝ սկսած 1621 թվականից: Ամենահինը 8-րդ դարից է, հաղորդում է HaberTurk-ը:

100 գաղտնի փաստաթղթերի ցուցահանդեսը, որոնցում ներառված են նաև Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթեր, կազմակերպված է Կապիտոլիայի թանգարանում և կտևի մինչև այս տարվա սեպտեմբեր ամիսը:

Ինչպես հայտնել է Վատիկանի գաղտնի արխիվի պրեֆեկտ եպիսկոպոս Սերժիո Պագանոն, փաստաթղթերը հսկայական տեղեկատվություն են պարունակում հայերի մասին: Իսկ ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը, Պագանոն նշել է, որ հրապարակված փաստաթղթերը վկայում են թուրք զինվորականների կողմից հայերին ենթարկված դաժան տանջանքների մասին: